ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ և ՀՀ պետական, քաղաքական, կուսակցական գործիչ Արտաշես Գեղամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտայի հ.39/12 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ և ՀՀ պետական, քաղաքական, կուսակցական գործիչ Արտաշես Գեղամյանը ծնվել է 1949թ. դեկտեմբերի 2-ին, Երևանում:

1971թ. ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը:

1988-1990թթ. եղել է ԽՄԿԿ կենտկոմին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիայի ունկնդիր (Մոսկվա):

1971-1978թթ. աշխատել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետի կոմերիտական կազմակերպության ազատված քարտուղար, Կարելիայի Ինքնավար Հանրապետությունում՝ Հայաստանի հանրապետական ուսանողական շինջոկատի հրամանատար, ՀԼԿԵՄ կենտկոմում՝ հրահանգիչ, Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի կոմերիտական կազմակերպության առաջին քարտուղար, ՀԼԿԵՄ կենտկոմի ուսանող, երիտասարդության բաժնի վարիչ:

1979-1987թթ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի ապարատում աշխատել է հրահանգիչ, սեկտորի վարիչ, տեսուչ, կենտկոմի առաջին քարտուղարի օգնական, կուսակցական-կազմակերպական աշխատանքների բաժնի վարիչի առաջին տեղակալ: 1987-1989թթ.՝ ՀԿԿ Երևանի Մաշտոցի կուսշրջկոմի առաջին քարտուղար:

1989-1990թթ. եղել է Երևանի քաղաքապետ: Նրա պաշտոնավարության օրոք ավարտվել են Մասիս-Երևան և Արզական-Երևան ջրատարների տարիներ շարունակ ձգձգվող շինարարությունը՝ քաղաքին տալով վայրկյանում 1200 լիտր ջուր, շահագործման են հանձնվել բազմաթիվ բնակելի շենքեր, դպրոցական և նախադպրոցական կառույցներ, Ազատության պողոտայի հանգույցը («Լամբադա»), բարեկարգվել են տասնյակ միկրոշրջաններ, շեշտակի թափ է ստացել Դավթաշենի կամուրջի շինարարությունը:

Կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից օծվելով՝ Արտաշես Գեղամյանի ջանքերի և հետևողական աշխատանքի շնորհիվ հիմնադրվել է Երևանի Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարը: Նուբարաշենի ողբերգական հայտնի իրադարձությունների օրը՝ 1990թ. մայիսի 27-ին Արտաշես Գեղամյանը կանխել է երևանցիներին սպառնացող արյունալի վտանգը:

1991-1995թթ.՝ որպես «Պրոմեթևս» հայկական ունիվերսալ բորսայի և ապա «21-րդ դար» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն՝ հանրապետության շրջափակման պայմաններում, էներգետիկ ճգնաժամի տարիներին, կազմակերպել է կենսական անհրաժեշտություն ներկայացնող արդյունաբերական հումքի մեծաքանակ ներկրումը Հայաստան՝ Ռուսաստանի ռազմաօդային տրասպորտով:

1997թ. հիմնադրել և գլխավորել է «Ազգային Միաբանություն» կուսակցությունը:

1998, 2003 և 2008թթ. եղել է ՀՀ նախագահի թեկնածու:

1995-2017թթ. եղել է ԱԺ պատգամավոր:

Արտաշես Գեղամյանը մահացել է 2024թ. սեպտեմբերի 20-ին, Երևանում;

ՀԽՍՀ և ՀՀ պետական, քաղաքական, կուսակցական գործիչ Արտաշես Գեղամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտայի h.39/12

հասցեում փակցնելու միջնորդությունը ներկայացվել է ՀՀ քաղաքացի Մամիկոն Գեղամյանի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ